**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-8/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ**
**ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

27.03.2020թ.
ժամը $10^{00}$

**Մասնակցում էին՝**
**գնահատող հանձնաժողովի նախագահ, գնահատող աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կոլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ Գ. Ուստյան,
**գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ աշխատակազմի վարչատնտեսական վարչության պետ Լ. Խաչատրյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կոլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Է. Համբարձումյան,
ՀՀ ՊՆ աշխատակազմի ՎՏ վարչության հրատարակչական բաժնի պետի տեղակալ Ա. Մուրադյան,
**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության առաջատար մասնագետ Գ. Գևորգյան:

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-8/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**
(Գ. Գևորգյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-8/1» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-8/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարող (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսանկյունից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:
6. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**
(Գ. Գևորգյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար տպագրության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-8/1» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակիցների անվանումը |
|---|---|
| 1 | «Անտարես» ՍՊԸ |
| 2 | «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ |
| 3 | «Դասո Պրինտ» ՍՊԸ |
| 4 | Դավիթ Քոչարյան Ա/Ձ |
| 5 | «Հենակետ» ՓԲԸ |
| 6 | «Պրինտ Բոքս» ՍՊԸ |
| 7 | «Սեկո-Պրինտ» ՍՊԸ |
| 8 | «ՎԱՌՄ» ՍՊԸ |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-8/1» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.**
(Գ. Գևորգյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:
2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-8/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Անտարես» ՍՊԸ-ի, մասնավորապես՝ «Անտարես» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած Հավելված 1-ի իրական շահառուներին վերաբերող աղյուսակում նշված չէ իրական շահառու հանդիսացող անձի հայրանունը, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, 02.04.2020թ. մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի բացման և գնահատման նիստը և ծանուցել «Անտարես» ՍՊԸ-ին անհամապատասխանության շտկման վերաբերյալ: Սահմանված ժամկետում մասնակիցը շտկել է արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.**

(Գ. Գևորգյան)

3.1 Գնումների մասին ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝ կից Հավելված 1 (ՀՀ դրամ):

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են (ճիշտ են), բացառությամբ 35-րդ չափաբաժնի մասով Դավիթ Քոչարյան Ա/Ձ-ի գնային առաջարկի (գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարներից ոչ մեկի հանրագումարը չի համապատասխանում ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին), ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետը, մերժել է Դավիթ Քոչարյան Ա/Ձ-ի հայտը 35-րդ չափաբաժնի մասով:

3.3 Քանի որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-8/1» ծածկագրով գնման ընթացակարգի 47-րդ և 53-րդ չափաբաժիններին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին, իսկ 39-րդ, 40-րդ, 48-րդ, 54-րդ, 62-րդ և 63-րդ չափաբաժինների մասով ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման հայտով սահմանված գինը, ուստի գնահատող հանձնաժողովը, առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետով, 06.04.2020թ. մասնակիցներին ծանուցել է, որ գների նվազեցման նպատակով 09.04.2020թ. ժամը 11:00-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կվարվեն բանակցություններ: Բանակցություններին ներկայացել են «Անտարես» ՍՊԸ-ն և «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ն, վերջինս նվազեցրել է 54-րդ չափաբաժնի մասով իր կողմից ներկայացված գնային առաջարկը՝ սահմանելով 24727,5 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

3.4 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ ընթացակարգը 37-րդ և 38-րդ չափաբաժինների մասով հայտարարվել է չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը (ոչ մի հայտ չի ներկայացվել), իսկ 39-րդ, 40-րդ, 48-րդ, 62-րդ և 63-րդ չափաբաժինների մասով հայտարարվել է չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-8/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

(Գ. Գևորգյան)

4.1 10.04.2020թ.՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, գնահատող հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում ըստ չափաբաժինների ընտրված մասնակից են ճանաչվել՝ կից Հավելված 1 (ՀՀ դրամ):

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-8/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-8/1» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:**

(Գ. Գևորգյան)

5.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-8/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**6. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Գ. Գևորգյան)

6.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-8/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել ոչ ուշ, քան գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրը, ժամը 11:00-ին, ք. Երևան Բագրևանդի 5 հասցեում ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

| | |
|---|---|
| **Գնահատող (ԳԱՊ)** | Գ. Ուստյան |
| **Գնահատող** | Լ. Խաչատրյան |
| **Գնահատող** | Է. Համբարձումյան |
| **Գնահատող** | Ա. Մուրադյան |
| **Գնումները համակարգող** | Գ. Գևորգյան |